ԿԱՐԾԻՔ

ՄԱՐԻՆԵ ԱՐԹՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ <<ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 <<ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական հարաբերությունների ձևավորման ներկա փուլում ՀՀ տնտեսության բնականոն գործունեության հարցում առանցքային դերակատարում է վերապահված ֆինանսական համակարգին, որն ապահովում է հասարակական վերարտադրության գործընթացի անընդհատությունը և այդ նպատակով անհրաժեշտ դրամական հոսքերի ուղղորդված շարժը: Տնտեսական շրջապտույտի նպատակամետությունն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացմամբ և դրանց ռացիոնալ տեղաբաշխմամբ: Արդյունքում, մեծանում են տնտեսություն ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունները, ինչը կարևոր պայման է հանդիսանում ոչ միայն ընդլայնված վերարտադրության ապահովման, այլ նաև տնտեսության տեխնոլոգիական զարգացման համար:

Վերջին տասնամյակում համաշխարհային ֆինանսական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև ազգային տնտեսությունների առջև ծառացած նոր մարտահրավերները պահանջում են դրամավարկային քաղաքականության իրականացման նոր մոտեցումների և սկզբունքների մշակում ու կիրառում: Ակնհայտ է նաև այդ քաղաքալանության ազդեցությունը ֆինանսական համակարգի վրա, որի գնահատման խնդիրների և դրանց լուծման ուղիների բացահայտմանն է նվիրված աշխատանքը: Նշված հանգամանքով էլ պայմանավորված են ատենախոսության ***հրատապությունն ու արդիականությունը:***

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ***ներածական*** մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ «Դրամավարկային քաղաքականության իրականացման տեսամեթոդական մոտեցումներն ու ֆինանսական համակարգի կայունության համադրելիության հիմնահարցերը» գլխում*** ներկայացվել են դրամավարկային քաղաքականության զարգացման միտումները և իրականացման մոտեցումները, քննարկվել են ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և դրամավարկային քաղաքականության փոխազդեցության և փոխկապակցվածության հիմնահարցերը:

Հետազոտության ***երկրորդ՝ «ՀՀ ֆինանսական համակարգի կայունությանը խոչընդոտող գործոնների վերլուծություն և գնահատում» գլխում*** դիտարկվել են ֆինանսական համակարգի կայունության ապահովման մոտեցումները, բացահայտվել են դրա գնահատման խնդիրները, վերլուծվել են հանրապետության ֆինանսական համակարգի կայունության ապահովման մակրոտնտեսական ռիսկերը, գնահատվել է ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը:

Աշխատանքի ***երրորդ՝ «ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և դրամավարկային քաղաքականության փոխազդեցության դրսևորումները և գնահատումը» գլխում*** կատարվել է ՀՀ ֆինանսական համակարգի վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության վերլուծություն, հիմնավորվել

է ՀՀ մակրոպրուդենցիալ քաղաքականության ռազմավարության անհրաժեշտությունն ու ներկայացվել են դրա հայեցակարգային դրույթները:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ դրամավարկային քաղաքականության նպատակների ընտրության համար մշակվել է կենտրոնական բանկերի կողմից հաշվի առնվող չափորոշիչների Smart ամբողջություն, կառուցվել է ՀՀ դրամավարկային և մակրոպրուդենցիալ քաղաքականությունների երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակների համադրության մատրիցա, մշակվել է ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող ինդեքս՝ հիմնված ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշտադիտարվող գործոնների վրա, ավտոռեգրեսիոն մոդելավորման միջոցով գնահատվել է դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա, առաջարկվել են Եվրոպայում գործող չափորոշիչներին բավարարող ՀՀ մակրոպրուդենցիալ քաղաքականության ռազմավարության հայեցակարգային սկզբունքներ:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Դրանք կարող են լայնորեն օգտագործվել հանրապետությունում ֆինանսական համակարգի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման ընթացքում: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից***, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Հեղինակը հանրապետության դրամավարկային համակարգի արդյունավետությանը և ֆինանսական կայունությանը միտված քաղաքականության հաջողության նախապայման է դիտարկում կենտրոնական բանկի՝ սպասումներին միտված մոտեցումները (Եզրակացություններ, 3-րդ կետ): Կարևորելով վերջինիս նշանակությունը, միաժամանակ, կարծում ենք, որ հեղինակը պետք է առավել խորությամբ անդրադառնար ՀՀ կենտրոնական բանկի կողմից այդ նպատակով կիրառվող գործիքակազմի վերլուծությանը, արդյուավետության գնահատմանը, թերությունների բացահայտմանը և լուծումների ներկայացմանը, քանի որ ֆինանսական կայունության վրա կարող են ազդել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են հանրապետության ֆինանսական համակարգի թերզարգացվածությունը, մասնավոր տրանսֆերտները և այլն:
2. Ատենախոսությունում հեղինակն անդրադարձել է ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի պլանավորվող հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական հնարավոր ռիսկերի ազդեցության գնահատմանը (էջ 89): Միևնույն ժամանակ, աշխատանքում դիտարկված չեն այդ ռիսկերի կառավարման գործիքակազմերը և գնահատված չեն դրանց բավարար կամ ոչ բավարար լինելու խնդիրները: Կարծում ենք, դրանց լուծումը պահանջում է առավել խորը ուսումնասիրություններ:
3. Հեղինակն աշխատանքում ֆինանսական կայունությունը դիտարկում է որպես մի իրավիճակ, որի պայմաններում կլանվում և կանխարգելվում են համակարգային ցնցումներն ու ռիսկերը՝ այդ կերպ նպաստելով երկրի երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովմանը: Կարծում ենք, որ առաջարկվող մոտեցումն ամբողջությամբ չի բացահայտում ֆինանսական կայունության էությունը և այն սահմանափակվում է միայն երկարաժամկետ կայուն տնտեսական աճին նպաստելու հանգամանքով, ինչն, իրականում, այդպես չէ:

4. Հեղինակի կարծիքով, ֆինանսական կայունության ապահովմամբ ոչ թե պետք է դիմակայել արդեն իսկ առաջացած ցնցումներին ու անհավասարակշռություններին, այլ պետք է պարզապես կանխել, կլանել և վերահսկել հնարավոր համակարգային ցնցումները (էջ 129): Միևնույն ժամանակ, բազմիցս աշխատանքում իրավացիորեն նշվում է ՀՀ տնտեսության և, մասնավորապես, ֆինանսական համակարգի վրա արտաքին գործոնների էական ազդեցության մասին: Այս պարագայում, հեղինակի կողմից բավարար խորությամբ անդրադարձ չի կատարված դրանց կանխման, կլանման և վերահսկման մեխանիզմներին և հնարավորություններին:
5. Աշխատանքում հեղինակը նշում է, որ ֆինանսական կայունության գնահատման համար հաշվարկվող ցուցանիշների հիմքում ՀՀ կենտրոնական բանկը դնում է միայն բանկային համակարգում առաջացող ռիսկերի չեզոքացումը (էջ 132): Հասկանալի է, որ նման իրավիճակն, ինչ-որ առումով, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ ֆինանսական համակարգի հիմնական օղակը շարունակում է մնալ բանկային համակարգը: Ի դեպ, այս հանգամանքը պետք է դառնար հեղինակի համակողմանի վերլուծության առարկա՝ դրա փոփոխությանն ուղղված կոնկրետ առաջարկությունների ներկայացմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են ֆինանսական համակարգի վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատման հիմնահարցերին նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Մ. Ավետիսյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակն, ակնհայտորեն, բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել դրամավարկային քաղաքականության մշակման ու իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Մ. Ավետիսյանի «ՀՀ ֆինանսական համակարգի վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**
28.02.2025թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
բ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար
28.02.2025թ. **Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**